6 ամիս տևողությամբ կլինիկական հետազոտություններում, լուրջ վարակների հաճախականության դեպքերի թիվը ակտեմրա 8 մգ/կգ+ DMARD բուժում ստացող հիվանդների խմբում եղել է 5.3 դեպք՝ 100 հիվանդ/տարի, համեմատած 3.9 դեպք՝ 100 հիվանդ/տարի, պլացեբո+DMARD բուժում ստացող հիվանդների խմբի հետ: Ակտեմրայի մոնոթերապիա ստացող հիվանդների մոտ լուրջ վարակների թիվը եղել է 3.6 դեպք՝ 100 հիվանդ/տարի, համեմատած 1.5դեպք՝ 100 հիվանդ /տարի MTX ստացող հիվանդներ խմբում:

Ավելի երկարատև բուժում ստացող հիվանդների մոտ ընդհանուր վարակների (բակտերիալ, վիրուսային և սնկային) հաճախականության դեպքերի թիվը եղել է 4.7 դեպք՝ 100 հիվանդ/տարի: Գրանցված լուրջ վարակները, որոշ դեպքերում նաև մահվան ելքով, եղել են հետևյալը՝ թոքաբորբ, ցելուլիտ, հերպես զոստեր, զաստրոենտերիտ, սեպսիս և բակտերիալ արթրիտ: Գրանցվել են նաև ուղեկցող օպորտունիստիկական ինֆեկցիաների դեպքեր:

5.1.1.1.2 Այլ կողմնակի ռեակցիաներ

Օրգան համակարգ	Շատ բնորոշ	Բնորոշ	Ոչ բնորոշ
Արյան և լիմֆատիկ համակարգի հիվանդություններ		Լեկոպենիա Նեյտրոպենիա	
Էնդոկրին հիվանդություններ			Հիպոթիրոիդիզմ
Աչքի հիվանդություններ		Կոնյուկտիվիտ	
Ստամոքս աղիքային հիվանդություններ		Որովայնի ցավ, բերանի խորոչի խոցոտում, գաստրիտ	Ստոմատիտ, ստամոքսի խոց
Ընդհանուր հավնություններ և ներերկման հետ կապված վիճակներ	Ներարկման տեղի ոռակցիա	Ծայրամասային այտուց, գերզայունության ոռակցիա	
Ինֆեկցիաներ և թափանցումներ	Վերին շնչուղիների ինֆեկցիա	Ցելուլիտ, թոքաբորբ, բերանի հերպես, հերպես սիմպլեքս, հերպես զոստեր	Դիվերտիկուլիտներ
Լարորատոր հետազոտության հետ կապված շեղումներ		Հեպատիկ տրանսամինազներ ի բարձրացում, քաշի կորուստ, ընդհանուր բիլիռուբինի բարձրացում*	
Մետաբոլիզմ և անուցման հետ կապված հիվանդություններ	Հիպերխոլեստերինեմի ա *		Հիպերտրիգլիցերիդեմիա
Նյարդային համակարգի հիվանդություններ		Գլխացավ, գլխապտույտ	
Երիկամների			Նեֆրոլիթիզ

հիվանդություններ			
Շնչուղիների, կրծքավանդակի և մեղիաստինալ հիվանդություններ		Հազ, դիսպնե	
Մաշկային և ենթամաշկի հյուսվածքի հիվանդություններ		Քոր, եղնջատենդ	
Անոթային հիվանդություններ		Արյան բարձր ճնշում	

* Ներառում է ցուցանիշների բարձրացում հայտնաբերված ռուտին լաբորատոր մոնիտորինգի հետևանքով (տես տեքստ ստորև)

5.1.1.1.3 Ներարկման ռեակցիաներ

6-ամիս տևողությամբ վերահսկման հետազոտություններում կողմնակի երեւոյթները կազմել են 6.9%՝ կապված ներարկման հետ (ներարկումից 24 ժամվա ընթացքում ակտեմրա (8մգ/կգ)+ DMARD ստացող հիվանդների խմբում մոտ և 5.1% պլացեբո ստացող հիվանդների: Ներարկման հետ կապված կողմնակի երևույթները եղել են հիպերտենզիայի էպիզոդներով: Ներակումից 24 ժամ անց կողմնակի երևույթներն էին գլխացավը և մաշկային երևույթները, որոնք չեն հանդիսանում ակտեմրայի ընդհատման պատճառ:

Անաֆիլակտիկ ռեակցիաների հաճախականությունը , որոնք զարգացել են 3,778 հիվանդներից 6-ի մոտ (0.2%), եղել է մի քանի անգամ ավելի բարձր 4 մգ/կգ դեղաչափի ներարկման ժամանակ քան 8 մգ/կգ-ին ներարկման ժամանակ: Կլինիկորեն հաստատված զերգայունության ռեակցիաները կախված ակտեմրայով բուժման հետ, որը պահանջել է բուժման ընդհատում, եղել են արձանագրված 3778 հիվանդից 13-ի մոտ (0.3%), ովքեր բուժվել են ակտեմրայով ստուգիչ և բաց- պիտակավորված (open labeled) կլինիկական հետազոտություններում: Այս ռեակցիաները ընդհանուր առմամբ նկատվել են երկրորդ կամ հինգերորդ ակտեմրայի ներարկման ժամանակ: Մահացու անաֆիլաքսիա արձանագրվել է Ն/Ե Ակտեմրայով բուժման ժամանակ, երբ այն գրանցվել էր:

5.1.1.1.4 Թոքերի ինտերստիցիալ հիվանդություններ

Թոքերի ֆունկցիայի խանգարումը հնարավոր է ավելացնի վարակների զարգացման հավանականությունը: Եղել են հետմարկետինգային զեկույցներ թոքային ինտերստիցիալ հիվանդությունների մասին (ներառյալ թոքերի բորբոքումը և թոքերի ֆիբրոզը), որոշ դեպքերում նույնիսկ մահացու էլքով:

5.1.1.1.5 Իմունոգենություն

Ընդհանուր թվով 2,876 հիվանդ եղել են ստուգված Ակտեմրայի հակամարմինների առկայության համար 6 ամիս տևողությամբ ստուգիչ կլինիկական հետազոտություններում ; 46 հիվանդներից (1.6%) 6 ի մոտ զարգացել են հակամարմիններ Ակտեմրայի հակամարմինների հանդեպ և եղել է բժշկականորեն հաստատված գերզգայունության ռեակցիաներ; այս թվից 5-ի մոտ եղել է բուժման մշտական դադար: Հիվանդներից 30 -ի (1.1%) մոտ զարգացել են չեզոքացման հակամարմիններ:

5.1.1.1.6 Զարորակ նորագոյացություններ

Զարորակ նորագոյացությունների վտանգը ՌԱ հիվանդների մոտ բարձր է: Իմունոմոդուլյատոր դեղերը հնարավոր է բարձրացնեն չարորակ նորագոյացությունների թիվը:

5.1.2 ՊՅԻԱ

Ընդհանուր առմամբ, հիմնական կողմնակի ռեակցիաները պՅԻԱյի ժամանակ հանդիպող եղել են նույնը , ինչպես և ՌԱ-յով հիվանդների մոտ:

5.1.2.1 ՆԵ Ակտեմրա պՅԻԱյի ժամանակ

Տոցիլիզումաբի անվտանգությունը պՅԻԱյի ժամանակ ուսումնասիրվել է 2-ից 17 տարեկան 188 հիվանդների մոտ: Ընդհանուր առմամբ հիվանդ/տարի թիվը եղել է 184.4: Հիմնական կողմնակի ազդեցությունները եղել են նույնը, որոնք հանդիպել են Ակտեմրայով բուժման ժամանակ ՌԱ-ով և հՅԻԱ-յով հիվանդների մոտ: Ի համեմատ ՌԱ հիվանդ մեծահասակների նազոֆարինգիտների թիվը, գլխացավերը, սրտխառնոցը և նեյտրոֆիլների քանակի իջեցումը պՅԻԱ-յով հիվանդների մոտ հանդիպել է ամենա հաճախ դեպքերում: Իսկ խոլեստերոլի ցուցանիշների բարձրացումը արձանագրվել է պՅԻԱ ժամանակ ավելի քիչ քան ՌԱ հիվանդների մոտ Ակտեմրայով բուժվելիս:

5.1.2.1.1 Ինֆեկցիաներ

Ինֆեկցիաների թիվը, որը նկատվել է տոցիլիզումաբով բուժման ժամանակ եղել է 163.7` 100 հիվանդ/տարի համադրությամբ: Հիմնական բնորոշ արձանագրվող դեպքերը եղել են նազոֆարինգիտ և վերին շնչուղիների ինֆեկցիաները: Լուրջ ինֆեկցիայիների հանդիպելու հաճախությունը թվով եղել է ավելի շատ այն հիվանդների մոտ, ում մոտ քաշը եղել է <30 կգ և որոնք ստացել են 10 մգ/կգ տոցիլիզումաբ որպես բուժում (12.2` 100 հիվանդ/տարի) ի համեմատ այն հիվանդների ում մոտ քաշը եղել է ≥ 30 kg, որոնք ստացել են 8 մգ/կգ տոցիլիզումաբ (4.0` 100 հիվանդ/տարի): Ինֆեկցիաների քանակը, որը բերել է դեղաչափի ընդհատման թվով եղել է ավելի բարձր <30 կգ քաշ ունեցող հիվանդների մոտ, որոնք ստացել են 10 մգ/կգ բու-ում (21.4%) ի համեմատ ≥ 30 կգ քաշ ունեցող հիվանդների մոտ, որոնք ստացել են 8 մգ/կգ տոցիլիզումաբով բուժում (7.6%):

5.1.2.1.2 Ներարկյան Ռեակցիաներ

պՅԻԱ-յով հիվանդների մոտ, ներարկման վերաբերվող ռեակցիաները բնորոշվում են իբրև այն բոլոր դեպքերը, որոնք տեղի են ունենում ներերկումից հետո առաջին 24 ժամվա ընթացքում: Տոցիլիզումաբ ստացող խմբում, 11 հիվանդներ (5.9%) ունեցել են ներարկման հետ կապված ռեակցիաներ և 38 հիվանդի (20.2%) մոտ առաջացել է առնվազն մեկ դեպք առաջին 24 ժամվա ընթացքում ներարկումից հետո: Ներարկման ժամանակ ամենա հաճախ հանդիպող ռեակցիաները եղել են զլխացավը, սրտխառնոցը և արյան ճնշման իջեցումը, իսկ 24 ժամվա ընթացքում ամենա հաճախը հանդիպել են զլխապտույտը և արյան ճնշման իջեցում: Ընդհանուր առմամբ, այն կողմնակի ազդեցության դեպքերը, որոնք հանդիպել են առաջին 24 ժամվա ընթացքում եղել են նույնը, որոնք հանդիպել են ՌԱ և հՅԻԱյով հիվանդներին բուժելիս:

Կլինիկորեն լուրջ գերզգայունության ռեակցիաներ, որոնք կապված են եղել տոցիլիզումաբի ընդունման հետ, և որոնց հետևանքով դադարեցվել է բուժումը, արձանագրված չեն եղել:

5.1.2.1.3 Իմունոգենություն

Մեկ հիվանդի մոտ, որը եղել է տոցիլիզումաբի 10 մգ/կգ < 30 կգ դոզա ստացող խմբում, զարգացել են դրական հակա-տոցիլիզումաբի նկատմամբ հակամարմիններ, առանց գերզգայունության ռեակցիայի զարգացման, և որպես հետևանք, նա հանվել է հետազոտությունից :

5.1.2.1.4 Նեյտրոֆիլներ

Ամենօրյա լաբորատոր մոնիտորինգի ժամանակ, ամբողջ տոցիլիզումաբ ստացող հիվանդների մոտ նեյտրոֆիլների քանակի իջեցումը $1 \times 10^9/L$ թվից ներքև հանդիպել է 3.7% հիվանդների մոտ:

5.1.2.1.5 Տրոմբոցիտներ

Ամենօրյա լաբորատոր մոնիտորինգի ժամանակ ամբողջ տոցիլիզումաբ ստացող հիվանդների մոտ 1%-ը ունեցել են տրոմբոցիտների իջեցում մինչև $\leq 50 \times 10^3/\mu L$ առանց արյունահոսության:

5.1.2.1.6 Հեպատիկ տրանսամինազների բարձրացում

Ամենօրյա լաբորատոր մոնիտորինգի ժամանակ ամբողջ տոցիլիզումաբ ստացող հիվանդների մոտ 3.7%ի մոտ նկատվել է ALT կամ ASTի բարձրացում 3.7% և <1% համապատասխան:

5.1.2.1.7 Ճարպերի ցուցանիշներ

Ամենօրյա լաբորատոր մոնիտորինգի ժամանակ ամբողջ տոցիլիզումաբ ստացող հիվանդների թվի մոտ միայն մեկ հիվանդի (0.5%) մոտ նկատվել է ընդհանուր խոլեստերոլի բարձրացում $>1.5-2 \times ULN$ և մեկ հիվանդի մոտ (0.5%)՝ ցածր խտության լիպիդների բարձրացում $>1.5-2 \times ULN$:

5.1.3 ՀՅԻԱ

Ն/Ե ակտեմրայի անվտարգության պրոֆիլը հՅԻԱյի բուժման ժամանակ ուսումնասիրվել է 2ից 7 տարեկան հասակի 112 հիվանդների մոտ: 12-րդ շաբաթվա կրկնակի կույր, ստուգիչ փուլում 75 հիվանդ ստացել են տոցիլիզումաբ (8 մգ/կգ կամ 12 մգ/կգ՝ կադված մարմնի

քաշից): 12րդ շաբաթվանից հետո ակտեմրա դեղին անցնելու պես, հիվանդության վատթարացման համար հիվանդները եղել են բուժված բաց երկարացված փուլում:

Ընդհանուր առմամբ, կողմնակի ազդեցության դեպքերի թիվը հՅԻԱ-յի հիվանդների մոտ եղել է նույնքան, որքան գրանցվել է ՌԱ-յով հիվանդների մոտ: Ի համեմատ մեծահասակ ՌԱ-յով հիվանդների մոտ, որոնք բուժվել են տոցիլիզումար, հՅԻԱ-յով հիվանդները ունեցել են բարձր հաճախականությամբ հանդիպող նագոֆարինգիտ, նեյտրոֆիլների քանակի իջեցում, հեպատիկ տրանսամինազների բարձրացում և լուծ: Խոլեստերոլի բարձրացման դեպքերի թիվը եղել է ավելի պակաս քանակությամբ, քան ՌԱ-յով հիվանդների մոտ:

Ընդհանուր առմամբ, հՅԻԱ-յով հիվանդների մոտ, որոնք ստացել են ակտեմրա, ամենահաճախ կողմնակի ազդեցության դեպքերը եղել են նույնքան, որքան ՌԱ-յով հիվանդների մոտ:

5.1.3.1 Ինֆեկցիաներ

Կլինիկական հետազոտության 12րդ շաբաթում, բոլոր ինֆեկցիաների հաճախականության դեպքերը Ն/Ե ակտեմրա ստացող հիվանդների խմբում եղել է 344.7 ամեն 100 հիվանդ/տարվա համեմատ պլացեբո խմբում: Բաց-պիտակավորված ընդլայնված հետազոտությունում, ընդհանուր ինֆեկցիաների թիվը եղել է 306.6 ամեն 100 հիվանդ-տարի հաշված: Այս նույն 12-շաբաթում ստուգիչ խմբում, լուրջ ինֆեկցիաների թիվը Ն/Ե ակտեմրայի խմբում եղել է 11.5 ամեն 100 հիվանդ/տարի: Բաց պիտակավորված ընդլայնված հետազոտության մեջ լուրջ ինֆեկցիաների թիվը մնացել է կայուն՝ 11.3 ամեն 100 հիվանդ/տարի համեմատ: Զեկուցված լուրջ ինֆեկցիաները եղել են նույն թվի որքան որ ՌԱ-յով հիվանդների մոտ՝ ջրծաղիկի դեպքերը և միջին ականջաբորբի դեպքերը գումարած:

5.1.3.2 Ներարկման հետ կապված ռեակցիաներ

հՅԻԱ-ով հիվանդների մոտ, ներարկման հետ կապված ռեակցիաները այն դեպքերն են, որոնք զարգանում են ակտեմրայի ներարկումից առաջին 24 ժամվա մեջ: 12րդ շաբաթվա ստուգիչ կլինիկական հետազոտության մեջ, ակտեմրայի խմբի հիվանդների 4%-ը ունեցել այդ ռեակցիաները: Եղել է նաև մեկ դեպք (*angioedema*) համարվել է լուրջ և կյանքին սպառնացող և այդ հիվանդը դադարել է բուժումը:

Ակտեմրայի խմբում հիվանդների 16%-ը ունեցել են ռեակցիաներ ներարկումից առաջին 24 ժամվա ընթացքում համեմատ պլացեբո խմբի հիվանդների 5.4%-ի հետ 12-րդ շաբաթյա կլինիկական հետազոտության ընթացքում: Ակտեմրայի խմբում հայտնաբերված ռեակցիաները եղել են՝ ցան, եղնջացան, լուծ, էպեհաստրիկ անհնգատություն, հեղացավ և գլխացավ: Ռեակցիաների դեպքերի մեջ եղել է մեկ լուրջ եղնջացան:

Կլինիկորեն լուրջ հերզոյությունների ռեակցիաները, որոնք եղել են ասոցացված Ն/Ե ակտեմրայի ներարկման հետ և որոնք պահանջել են բուժման դադարեցում եղել են զեկուցված <1% հիվանդների մոտ (112-ից), որոնք ստացել են Ն/Ե ակտեմրա ստուգիչ և բաց պիտակավորված կլինիկական խմբում:

5.1.3.3 Իմունոգենություն

Ն/Ե ակտեմրա ստացող հՅԻԱ-յի մեկ խմբում բոլոր 112 հիվանդների մոտ ստուգվել է ակտեմրայի հանդեպ հակամարմինների մակարդակը համեմատ նախնականին: Երկու հիվանդների մոտ զարգացել է ակտեմրայի հանդեպ հակամարմիններ, որից մեկը ունեցել է գերզգայունության ռեակցիա և հետազոտությունից հանվել է: Ակտեմրայի հանդեպ հակամարմինների զարգացման մակարդակը հնարավոր է լինի թերազնահատված, քանի որ ակտեմրան կարող է մտնել այլ դեղերի հետ փոխազդեցության մեջ և երեխաների մոտ նկատվի դեղի ավելի բարձր խտություն քան մեծահասակների մոտ:

5.1.3.4 Նեյտրոֆիլներ

Ամենօրյա լաբորատոր հետազոտությունների ընթացքում հՅԻԱ-յով հիվանդների մոտ 12-շաբաթյա կլինիկական հետազոտություններում նեյտրոֆիլների քանակը եղել է $1 \times 10^9/l$ -ից ցածր 7% հիվանդների մոտ Ն/Ե ակտեմրայի խմբում, իսկ պլացեբո խմբում՝ ոչ:

Բաց պիտակավորված կլինիկական հետազոտություններում նեյտրոֆիլների քանակի իջեցում $1 \times 10^9/l$ -ից ցածր եղել է Ն/Ե ակտեմրա ստացող խմբի 15% հիվանդների մոտ:

52-շաբաթյան կլինիկական հետազոտության ժամանակ նեյտրոֆիլների մակարդակը $1 \times 10^9/L$ -ից ցածր եղել է ենթամաշկային ակտեմրա ստացող 23.5% հիվանդների մոտ:

5.1.3.5 Տրոմբոցիտներ

Ամենօրյա լաբորատոր հետազոտությունների ընթացքում 12-շաբաթյա կլինիկական հետազոտությունում հՅԻԱ-յով պլացեբո խմբի հիվանդների 3%-ի և Ն/Ե ակտեմրա ստացող հիվանդների 1%-ի մոտ տրոմբոցիտների իջեցում եղել է մինչև $\leq 100 \times 10^3/\mu l$.

Բաց պիտակավորված կլինիկական հետազոտության ժամանակ տրոմբոցիտների քանակի իջեցումը $100 \times 10^3/\mu l$ -ից ցածր նկատվել է Ն/Ե ակտեմրա ստացող 3%-ի մոտ, առանց արյունահոսության դեպքերի:

5.1.3.6 Լյարդային տրանզամինազների բարձրացում

Ամենօրյա լաբորատոր հետազոտությունների ընթացքում հՅԻԱ-յով հիվանդների մոտ 12-շաբաթյա կլինիկական հետազոտություններում ALT-ի կամ AST $\geq 3 \times ULN$ նկատվել է Ն/Ե ակտեմրա ստացող խմբի հիվանդների 5% և 3% հիվանդների մոտ համապատասխան, առանց դրա պլացեբո խմբում:

Բաց պիտակավորված կլինիկական հետազոտությունում, ALT կամ AST բարձրացումը $\geq 3 \times ULN$ հաղնիպել է Ն/Ե ակտեմրա ստացող հիվանդների 12% և 4%ի մոտ համապատասխան:

5.1.3.7 Իմունոգլոբուլին G (IgG)

IgG-ի մակարդակը իջել է բուժման ընթացքում: Դրա իջեցումը նախնական մակարդակի համեմատ համընթացել է 15 հիվանդների մոտ հետազոտության նույն ժամանակատվածում:

5.1.3.8 Ճարպերի ցուցանիշներ

Ամենօրյա լաբորատոր հետազոտությունների ընթացքում 12-շաբաթյա կլինիկական հետազոտություններում հիվանդների 13.4% և 33.3%-ը ունեցել են ցածր խտության խոլեստերոլի բարձրացում մինչև ≥ 130 mg/dL, իսկ ընդհանուր խոլեստերոլի մակարդակը հասել է ≥ 200 mg/dL համապատասխան:

6. Դեղային և այլ փոխազդեցություններ

Փոխազդեցության դեպքեր եղել են միայն մեծահասակների մոտ:

Շաբաթական մեկ անգամյա ակտեմրայի 10 մգ/կգ դեղաչափով միայնակ օգտագործումը չի ունեցել վիճազրակայնորեն հավաստի ազդեցություն MTX ազդեցության վրա:

Բնակչության ֆարմակոկինետիկ անալիզ չի հայտնաբերել որևէ ազդեցություն MTX-ի, ոչ ստերոիդ հակաբորբոքային (NSAIDs) կամ կորտիկոստերոիդային դեղերի ազդեցության վրա: Հիվանդների մոտ չի նկատվել ազդեցություն ստերոիդների կումուլատիվ դեղաչափի հանդեպ: Ակտեմրան չի հետազոտվել TNF անտագոնիստների կամ այլ կենսաբանական դեղերի հետ: Խորհուրդ չի տրվում ակտեմրան օգտագործել այլ կենսաբանական ազդեցությունների հետ:

Լյարդային CYP450 հորմոնի արտազատումը ընկճվում է այնպիսին ցիտոկինների ազդեցության ժամանակ, ինչպիսին է IL-6, որը բերում է քրոնիկ բորբոքման զարգացմանը: Այսպիսով, CYP450 արտազատումը կարող է փոխվել, երբ նշանակվում է ցիտոկին նվազեցնող բուժում, ինչպիսինն ակտեմրայով բուժումն է:

In vitro հետազոտություններում, կատարված մարդու հեպատոցիտների վրա հայտնաբերվել է, որ IL-6-ը բերում է CYP1A2, CYP2C9, CYP2C19 և CYP3A4 ֆերմենտների արտազատման նվազեցմանը: Ակտեմրան կարգավորում է այս ֆերմենտի արտազատումը:

ՌԱ-ով հիվանդների մոտ, սիմվաստատինի մակարդակը (CYP3A4) եղել է իջեցված 57%-ով մեկ ակտեմրայի եզակի դեղաչափի ներերկումից մեկ շաբաթ անց, որը եղել է նույնը կամ մի փոքր բարձր քան նկատվել է առողջների մոտ:

Ակտեմրայից սկսելուց առաջ կամ դադարելուց, հիվանդները ընդունում էին դեղեր, որոնք անհատական բուժման համար էին և ունեին շրջանառվում էին CYP450 3A4, 1A2 կամ 2C9-ով (օրինակ՝ ատորվաստատին, կալցիումական ուղիների պաշարիչներ, տեոֆիլին, վարֆարին, ֆենաբրոկումոն, ֆենիտոին, ցիկլոսպորիններ կամ բենզոդիազեպին) պետք է լինեն վերահսկողության տակ, քանի որ հնարավոր է դեղաչափի բարձրացում՝ ապահովելու համար բուժական ազդեցությունը: Ունենալով երկար կիսադուրսբերման պարբերություն ($t_{1/2}$), ակտեմրայի ազդեցությունը CYP450 ֆերմենտների ակտիվության վրա հնարավոր է պահպանվի մի քանի շաբաթ բուժումը դադարելուց հետո:

7. Օգտագործում <<հատուկ>> բնակչության մոտ

7.1 Հղիություն

Չկա համապատասխան տեղեկություն ակտեմրայի օգտագործման վերաբերյալ հղի կանանց մոտ: Կենդանիների մոտ օգտագործումը բերել է ինքնաբեր վիժման/էմբրո-ֆետալ մահի բարձր դեղաչափերի դեպքում: Մարդու հանդեպ պոտենցիալ վտանգը անհայտ է:

Ակտեմրան չպետք է օգտագործել հղիության ժամանակ, եթե չկա դրա ահրաժժեշտությունը:

7.2 Վերարտադրողական տարիքի կանայք

Կանայք, որոնք ունեն հղանալու պոտենցիալ, պետք է օգտագործեն արդյունավետ հակաբեղմնավորիչներ բուժման ընթացքում և 3 ամիս դրա դադարելուց հետո մ:

7.3 Կրծքով կերակում

Հայտնի չէ ակտեմրայի կրծքի կաթովարտագատման մասին: Դա չի ուսումնասիրվել նաև կենդանիների մոտ: Կրծքով կերակրման շարունակելու կամ դադարեցնելու որոշումը պետք է ընդունել՝ հաշվի առնելով կրծքով կերակրման օգուտը երեխայի և ակտեմրայի բուժման արդյունավետությունը հիվանդի մոտ:

7.4 Պտղաբերություն

Հասանելի ոչ կլինիկական տեղեկատվության հիման վրա, ակտեմրան չի ազդում պտղաբերության վրա:

7.5 65 տարեկան և բարձր տարիքի հիվանդների մոտ օգտագործում

65 տարեկան և բարձր տարիքի հիվանդների մոտ ակտեմրայի նշանակման դեղաչափի վերանայման կարիք չկա:

7.6 Երիկամի ֆունկցիայի խանգարում

Մանկական հասակի, ՌԱ-յով հիվանդների մոտ, որոնք ունեն երիկամի ֆունկցիայի խանգարում, չկա ակտեմրայի դեղաչափի վերանայման կարիք:

Երիկամի ֆունկցիան պետք է ուշադիր վեճահսկել բոլոր հիվանդների մոտ, եթե առկա են ծանր երիկամային հիվանդություններ և մանուկ հիվանդների մոտ, միջինից-ծանր երիկամային հիվանդություններ ունեցող երեխա հիվանդների մոտ; ակտեմրան այս հիվանդների մոտ չի ուսումնասիրվել:

7.7 Լյարդային հիվանդություններ

Ակտեմրան չի ուսումնասիրվել լյարդային խնդիրներ ունեցող հիվանդների մոտ, ինչի համար էլ դեղաչափերի խորհուրդներ տալ հնարավոր չեն:

7.8 Մանկական հիվանդներ

Ն/Ե ակտեմրայի անվտանգությունը և արդյունավետությունը չի ուսումնասիրվել երկու տարեկանից ցածր երեխաների մոտ ցանկացած ցուցման համար: Ի հավելումն, ակտեմրայի անվտանգությունը և արդյունավետությունը չի ուսումնասիրվել ստորև ներկայացված բնակչության մոտ.

- ՌԱ՝
 - Ն/Ե ակտեմրա: Երեխաներ 18 տարեկանից ցածր տարիքի մոտ
- պՅԻԱ՝
 - Ն/Ե ակտեմրա: Երեխաներ 2 տարեկանից ցածր
- հՅԻԱ՝
 - Ն/Ե ակտեմրա: Երեխաներ 2 տարեկանից ցածրների մոտ:

Այսպիսով, ակտեմրան այս տարիքի երեխաների մոտ խարհուրդ չի տրվում նաշանակել:

8. Դեղաչափավորումը և օգտագործումը

8.1 Ն/Ե ակտեմրա

8.1.1 ՌԱ

Ակտեմրայի խորհուրդ տրվող դեղաչափը ՌԱ հիվանդ մեծահասակների մոտ կազմում է 8 մգ/կգ մարմնի քաշի, բայց ոչ ավելի քան 800 մգ, որը պետք է նշանակվի ամեն 4 շաբաթը մեկ որպես 1-ժամանոց ներարկում, մեկական Ն/Ե կաթիլային ներարկում:

- Ակտեմրան կարելի է նշանակել մեթոտրեքսատի հետ զուգահեռ կամ մոնոթերապիայում եթե ՄԹՄ-ի հանդեպ առկա է անտանելիություն կամ եթե ՄԹԲ օգտագործումը անհամապատասխան է:
- Ակտեմրան չի ուղումնասիրվել TNF անտագոնիստների կամ այլ ՌԱ-յի կենսաբանական դեղերի հետ համատեղ: Խորհուրդ չի տրվում ակտեմրայի օգտագործումը այլ կենսաբանական դեղերի հետ:

8.1.2 Դեղաչափի ընդհանուր խորհուրդներ

Խորհուրդ չի տրվում Ակտեմրայի բուժումը այն հիվանդների մոտ, որոնք ունեն՝

- Ցածր նեյտրոֆիլների քանակ, բացարձակ նեյտրոֆիլների քանակը (ANC) ավելի քիչ է քան $2 \times 10^9/l$: Այն հիվանդների մոտ, ում մոտ զարգացել է ANC $< 0.5 \times 10^9/l$, բուժման շարունակելը խորհուրդ չի տրվում:
- Պետք է լինել զգոն, երբ ակտեմրայի նշանակումը սկսվում է այն հիվանդների մոտ, որոնք ունեն ցածր տրոմբոցիտների մակարդակ (օրինակ տրոմբոցիտների քանակը հաշվարկվում է $100 \times 10^3/\mu l$ -ից ցածր): Այն հիվանդների մոտ, որոնց մոտ զարգացել է

տրոմբոցիտների քանակ ավելի ցածր, քան $<50 \times 10^3/\mu\text{l}$, բուժման շարունակելը խորհուրդ չի տրվում:

- Պետք է ուշադիր լինել երբ նշանակվում է ակտեմրան այն հիվանդների մոտ, որոնք ունեն ավանին ամինոտրանսֆրանզների կամ ասպարտատ ամինոտրանսֆերանզների բարձր մակարդակ (AST) $>1.5 \times$ նորմալի վերին սահմանից (ULN): Այն հիվանդների մոտ, որոնց սկզբնական ALT կամ AST մակարդակը եղել է $>5 \times$ ULN, բուժման սկեյլը խորհուրդ չի տրվում: ALT-ի կամ AST-ի բարձրացումները >3 -ից $5 \times$ ULN, ակտեմրայի բուժումը պետք է ընդհատվի:
- Դեղաչափի իջեցումը 8 մգ/կգ-ից 4 մգ/կգ խորյուրդ է տրվում այն դեպքերի համար, որոնք պետք են որոշակի լաբորատոր տվյալների շեղումների ժամանակ, որոնք ներառում են լյարդի քնզիմների, նեյտրոպենիայի, և տրոմբոցիտոպենիայի ժամանակ:

8.1.3 Օգտագործման ընդհանուր դրույթները Ն/Ե օգտագործման ժամանակ

Ակտեմրայի կոնցենտրացիան Ն/Ե ներակելիս պետք է լինի նոսրացրած մինչև 100 մլ, առողջապահական մասնագետի կողմից ասեպտիկ պայմաններում:

- 100 մլ ներարկվող bag, դուրս քաշել 0.9% (9 մգ/մլ) ստերիլ, ոչ պիրոգեն ադալուծույթ ներարկման համար այնպիսի քանակի, որը կլինի հավասար ակտեմրայի այնպիսի քանակի որը կհամապատասխանի ակտեմրայի դեղաչափին՝ հաշվարկված այդ հիվանդի համար ասեպտիկ պայմաններում: Դեղի վերջնաժամկետը պետք է լինի ճիշտ ստուգված մինչև դեղի ներարկելը:
- Դանդաղ ավելացնել ակտեմրայի կոնցենտրատը ներարկվող Ն/Ե կաթիլային լուծույթի մեջ: Խառնելու համար նրբորեն պտտել սիստեման՝ բացառելու համար փրփուրներ:
- Պարենտերալ դեղերը պետք է լինեն զգուշորեն ստուգված՝ բացառելու հավելյալ մասնիկների առկայությունը կամ ներարկվող լուծույթի գույնի փոփոխությունը մինչև ներարկելը: Միայն այն լուծույթները, որոնք թափանցիկ են, թույլ դեղնավուն 2 և ազատ են տեսանելի մասնիկներից, պետք է լինեն նոսրացրած մինչև ներարկելը:
- Ամբողջովին նոսրացրած ակտեմրայի լուծույթը նախատեսված ներարկման համարկարելի է պահել $2^{\circ}\text{C}-8^{\circ}\text{C}$ կամ սենյակային ջերմաստիճանում (եթե նոսրացվել է հսկողության տակ և ապահով ասեպտիկ պայմաններում) մինչև 24 ժամ և պետք է լինի պահպանված լույսից: Ակտեմրայի լուծույթները չեն պարունակում հավելումներ, և դրա համր էլ չօգտագործված դեղը, որը մնում է սրվակի մեջ չպետք է օգտագործվի:
- Հասցրեք ակտեմրայի լուծույթը սենյակային ջերմաստիճանի մինչև ներարկելը:
- Ներարկումը պետք է տևի 60 րոպե և պետք՝ օգտագործել համապատասխան ներարկման պարագաներով: Չօգտագործել շիթային ներարկում:
- Ակտեմրան պետք է օգտագործել նույն Ն/Ե -ին պարագաներով, որոնք նախատեսված են այլ դեղ ստանալու համար: Չկան համատեղելիության կամ բիոքիմիական հետազոտություններ՝ գնահատելու համար ակտեմրայի կոմբինացված օգտագոնծումը այլ դեղերի հետ զուգընթաց:

Հավելյալ տեղեկության համար տես <<Քայլ – առ-Քայլ Դեղաչափում>>ն <<Ակտեմրայի դեղաչափման և օգտագործման ուղեցույց>> գրկույթները:

8.2 պՅԻԱ

Հիվանդի դեղաչափմանը և օգտագործմանը վերաբերվող հավելյալ տեղեկատվության համար տես <Քայլ – առ-Քայլ Դեղաչափում>>ն <<Ակտեմրայի դեղաչափման և օգտագործման ուղեցույց>> գրկույթները :

Բուժումը պետք է լինի կատարվի առողջապահական մասնագետի կողմից, որը ունի պՅԻԱ-յի ախտորոշման և բուժման փորձ: Բոլոր հիվանդները, որոնք բուժվել են ակտեմրայով պետք է տալ Հիվանդի Քարտ թերթիկը:

8.2.1 Ն/Ե ակտեմրայի օգտագործումը պՅԻԱ-յի ժամանակ

Երկու տարեկանից բարձր հիվանդների ցուցված դեղաչափը 8 մգ/կգ մեկ անգամ 4 շաբաթը մեկ այն հիվանդների մոտ, որոնց քաշը հավասար է կամ ավել է 30 կգ-ից կամ 10 մգ/կգ 4շաբաթը մեկ անգամ եթե մարմնի քաշը ավելի քիչ է քան 30 կգ: Դեղաչափը պետք է հաշվարկել ամեն ներարկումից առաջ՝ չափելով մարմնի քաշը: Դեղարափի փոփոխությունը պետք է լինի մարմնի քաշի փոփոխման հետ համապատասխան:

Ն/Ե ակտեմրայի անվտանգությունը և արդյունավետությունը 2տարեկանից ցածր երեխաների մոտ չի հետազոտվել: Չկա հասանելի տեղեկություն:

Դեղաչափի ընդհատումը խորհուրդ է տրվում պՅԻԱ-ով հիվանդների մոտ հետևելյալ լաբորատոր շեղումների ժամանակ, որոնք ներկայացված են ստորև ներկայացրած աղյուսակում: Եթե համապատասխանում է ՄՏՔ-ի և/կամ այլ դեղերի դեղաչափը պետք է լինի համապատասխանացրած կամ դադարած և տոցիլիզումաբի դեղաչափումը կանգնացնել մինչև կլինիկական վիճակը չլինի գնահատված: Քանի որ կան շատ կողմնակի հիվանդություններ , որոնք կարող են շեղել լաբորատոր տվյալները պՅԻԱ-յի ժամանակ, տոցիլիզումաբի օգտագործման ընդհատումը՝ հիմնված լաբորատոր տվյալների վրա, պետք է լինի կլինիկորեն հիմնված ամեն մի հիվանդի համար:

Ակտեմրայի դեղաչափի իջեցումը՝ հիմնված լաբորատոր հետազոտությունների տվյալների վրա, չի ուսումնասիրվել պՅԻԱ-ով հիվանդների մոտ: Ն/Ե ակտեմրան պՅԻԱ դեղաչափի փոփոխությունը՝ լաբորատոր շեղումների հիման վրա, ներկայացված է ավելի մանրամասնորեն այս ուղեցույցի <<Լաբորատոր տվյալներ>> մասում:

Հասանելի տվյալները առաջարկում են որ կլինիկական բարելավումը նկատվել է ակտեմրայի ներարկումից առաջին 12 շաբաթվա ընթացքում: Բուժման շարունականությունը պետք է լինի ուշադիր ուսումնասիրված հիվանդների մոտ, որոնք այս ժամանակահատվածում չեն ունենում լավացման ցուցանիշներ:

Ն/Ե ակտերայի նենարկումը պՅԲԱ յի ժամանակ		
Նոսրացումից հետո, Ն/Ե ակտերան հՅԲԱյի, պՅԲԱյի հիվանդների մոտ պետք է ներարկել որպես ներերակային ներարկում 1 ժամվա ընթացքում		
պՅԲԱյով հիվանդի քաշը	պՅԲԱյով հիվանդներ ≥ 30 կգ քաշով	պՅԲԱյով հիվանդներ < 30 կգ քաշով
Ակտերայի նոսրացում	Ակտերան պետք է լինի նոսրացրած 100 մլ վերջնական ծավալով ստերիլ, որ պերոզեն նատրիումի քլորիդի 9 մգ/մլ (0.9%) լուծույթում նախատեսված ՆԵ ներարկման համար օգտագործելով ասեպտիկ տեխնիկա	Ակտերան պետք է նոսրացնել 50մլ վերջնական ծավալի ստերի, ոչ պիրոզեն նատրիումի քլորիդի 9 մգ/մլ (0.9%) լուծույթում ՆԵ ներարկման լուծույթում, օգտագործելով ասեպտիկ տեխնիկա
Մինչև ներարկման Ակտերայի նոսրացման ուղղություններ	Դուրս քաշեք 9մգ/մլ (0.9%) ստերիլ որ պիրոզեն նատրիումի քլորիդի 100 մլ-նոց լուծույթից այնպիսի ծավալ, որը կլինի հավավասար Ակտերայի դեղաչափին՝ հաշվարկված այդ հիվանդի համար, ասեպտիկ պայմաններում: Ակտերայի անհրաժեշտ քանակը (0.4 մլ/կգ) պետք է դուրս հանել սրվակից և ներարկել 100 մլ-անոց ներակման համար նախատեղված լուծույթի մեջ: Հենց այս լուծույթը պետք է լինի ներարկվող 100 մլ վերջնական ծավալը: Նրբորեն շրջեք այն , որպեսզի լուծույթները խառնվել կանխարգելու փրփռումը:	Դուրս քաշեք 9մգ/մլ (0.9%) ստերիլ որ պիրոզեն նատրիումի քլորիդի 50 մլ-նոց լուծույթից այնպիսի ծավալ, որը կլինի հավավասար Ակտերայի դեղաչափին՝ հաշվարկված այդ հիվանդի համար, ասեպտիկ պայմաններում: Ակտերայի անհրաժեշտ քանակը (0.6 մլ/կգ) պետք է դուրս հանել սրվակից և ներարկել 50 մլ-անոց ներակման համար նախատեղված լուծույթի մեջ: Հենց այս լուծույթը պետք է լինի ներարկվող 50 մլ վերջնական ծավալը: Նրբորեն շրջեք այն , որպեսզի լուծույթները խառնվեն կանխարգելու փրփռումը:
* Ուշադրություն՝ Ակտերային ենթամաշկային ձևը նախատեսված չէ ներրակային ներարկման համար:		

8.2.2 Ընդհանուր դրույթներ ակտերայի Ն/Ե ընդունման համար

- Օգտագործման ժամկետը միշտ պետք է լինի ստուգված
- Պարենտերալ օգտագործվող դեղերը պետք է լինեն ստուգված տեսանելի հավելյալ մասնիկներ բացառելու կամ գունավորման փոփոխություններ հայտնաբերելու համար: Միայն այն լուծույթնորը, որոնք պարզ և թափանցիկ են, ունենն թեթև դեղնավուն գունավորում և չունեն տեսանելի հավելյալ մասնիկներ կարող են լինել նոսրացրած:
- Ամբողջովին նոսրացրած ակտերայի լուծույթը՝ նախատեսված ներարկման համար, պետք է պահել $2^{\circ}\text{C}-8^{\circ}\text{C}$ կամ սենյակային ջերմաստիճանում (եթե նոսրացվել է

հսկողության տակ և համապատասխան ասեպտիկ պայմաններում) մինչև 24 ժամվա ընթացքում, պահելով լույսից: Ակտեմրայի լուծույթը չեն պարունակում հավելումներ, ուստի սրվակի մեջ չօգտագործված դեղի մնացորդը չպետք է օգտագործվի:

- Ամբողջովին նոսրացրած ակտեմրայի լուծույթը հասցրեք սենյակային ջերմաստիճանի ներարկումից առաջ
- Ներակումը պետք է տևի 60 րոպեից ավելի և պետք է ներարկել ներարկվող համակարգով: Չներակել շիթային ձևով:
- Ակտեմրան չպետք է ներարկվի այլ դեղերի միևնույն ներարկվող համարգի հետ զուգահեռ: Չկա կատարված ակտեմրայի և այլ դեղերի հետ զուգահեռ ներարկման ֆիզիկական կամ բիոքիմիական համատեղելիության հետազոտություններ:

Այլ տեղեկատվության համար տես <<Քայլ առ Քայլ Դեղաչափում>> և <<Ակտեմրայի ընդունման ուղեցույցը>>:

8.3 Համակարգային ՅԻԱ (հՅԻԱ)

8.3.1 Ն/Ե ակտեմրա հՅԻԱ-յի ժամանակ

Առաջարկվող ակտեմրայի դեղաչափը հՅԻԱ-յի հվանդների հմար կազմում է 8 մգ/կգ ամեն 2 շաբաթը մեկ այն հիվանդների մոտ, որոնց մարմնի զանգվածը կազմում է ≥ 30 կգ, կամ 12 մգ/կգ ամեն 2 շաբաթը մեկ այն հիվանդների մոտ, որոնց մարմնի զանգվածը կազմում է < 30 կգ:

Դեղաչափը պետք է հաշվարկվի հիվանդի մարմնի զանգվածի համապատասխան ամեն ներարկումից առաջ: Դեղաչափի փոփոխությունը պետք է լինի հիմնված հիվանդի մարմնի զանգվածի փոփոխության հետ զուգընթաց ժամանակակի ընթացքում:

- Ակտեմրան կարող է նշանակվել որպես մոնոթերապիա (եթե ՄՏՔ հանդեպ առաջացել է անտանելություն կամ, եթե ՄՏՔ-ով բուժումը անհամապատասխան է) կամ ՄՏՔ հետ զուգընթաց:
- Չկանակտեմրայի և TNF անտագոնիստների կամ այլ կենսաբանական դեղերի հետ զուգընթաց օգտագործման հետազոտություններ հՅԻԱ-յի հիվանդների բուժման համար: Խորհուրդ չի տրրվում նշանակել ակտեմրան այլ կենսաբանական ազենտների հետ :

8.3.2 Դեղաչափին վերաբերող ընդհանուր խորհուրդներ

- Ակտեմրայի դեղաչափի անդհատումը հիմնված լաբորատոր շեղումների վրա խորհուրդ չի տրվում
- Ակտեմրայի դեղաչափի իջեցումը լաբորատոր շեղումների հիման վրա չի հետազոտվել հՅԻԱ-յով հիվանդների մոտ
- Եթե համապատասխանում է , զուգահեռ ՄՏՔ և /կամ այլ դեղերը պետք է հարմարեցվեն կամ ընդհատվեն և ընդհատվի ակտեմրան մինչև կլինիկական վիճակի գնահատումը
- Ակտեմրայի ընդունման որոշումը լաբորատոր շեղումների հիման վրա պետք է լինի հիմնված անհատականորեն ամեն հիվանդի համար

8.3.3 Ներարկման համար ընդհանուր դրույթներ

Ն/Ե ակտեմբայի կոնցենրատը պետք է լինի նոսրացրած հիմուտ առողջապահության ոլորտի մասնագետի կողմից ասեպտիկ պայմաններում

<p>Այն հիվանդները, ում մարմնի զանգվածը <30կգ է.</p> <ul style="list-style-type: none"> • 0.9% (9 մգ/մլ) ստերիլ, ոչ պիրոգեն նատրիումի քլորիդի 50 մլ ներերակային ներարկման համար նախատեսված ներարկվող համակարգից հետ քաշեք այնպիսի ծավալի հեղուկ, որը կլինի հավասար նոսրացման համար նախատեսվող Ակտեմբայի կոնցենտրատի՝ հաշվարկված տվյալ հիվանդի համար • Պահանջվող Ակտեմբայի կոնցենրատը (0.6 մլ/կգ) պետք է լինի քաշած սրվակից և լցվի նատրիումի քլորիդի 50 մլ ներերակային ներարկման համար նախատեսված ներարկվող համակարգի մեջ: Այս ծավալը պետք է լինի վերջնական ներարկվող հեղուկի 50մլ ծավալը: 	<p>Այն հիվանդները, ում մարմնի զանգվածը ≥30կգ է.</p> <ul style="list-style-type: none"> • 0.9% (9 մգ/մլ) ստերիլ, ոչ պիրոգեն նատրիումի քլորիդի 100 մլ ներերակային ներարկման համար նախատեսված ներարկվող համակարգից հետ քաշեք այնպիսի ծավալի հեղուկ, որը կլինի հավասար նոսրացման համար նախատեսվող Ակտեմբայի կոնցենտրատի՝ հաշվարկված տվյալ հիվանդի համար • Պահանջվող Ակտեմբայի կոնցենրատը (0.4 մլ/կգ) պետք է լինի քաշած սրվակից և լցվի նատրիումի քլորիդի 100 մլ ներերակային ներարկման համար նախատեսված ներարկվող համակարգի մեջ: Այս ծավալը պետք է լինի վերջնական ներարկվող հեղուկի 100մլ ծավալը:
---	---

- Ամեն մի սրվակից քաշած ակտեմբայի կոնցենրատը դանդաղ ավելացրեք Ն/Ե ներարկման ահամակարգի մեջ: Խառնելու համար նրբորեն շրջեք համակարգը կանխելով փրփուրներ:
- Պարենտերալ դեղերը պետք է լինեն զգուշորեն ստուգված բացառելու տեսանելի հավելյալ մասնիկների առկայությունը կամ ներարկվող լուծույթի գույնի փոփոխությունը մինչև ներարկելը: Միայն այն լուծույթները, որոնք թափանցիկ են, թույլ դեղնավուն և ազատ են տեսանելի մասնիկներից պետք է լինեն նոսրացրած:
- Ամբողջովին նոսրացրած ակտեմբայի լուծույթը՝ նախատեսված ներարկման համար, կարելի է պահել 2°C–8°C կամ սենյակային ջերմաստիճանում (եթե նոսրացվել է հսկոցության տակ և ապահով ասեպտիկ պայմաններում) մինչև 24 ժամ և պետք է լինի պահպանված լուսնից: Ակտեմբայի լուծույթները չեն պարունակում հավելումներ, և դրա համր էլ չօգտագործված դեղը, որը մնում է սրվակի մեջ չպետք է օգտագործվի :
- Հասցրեք ակտեմբայի լուծույթը սենյակային ջերմաստիճանի մինչև ներարկելը:
- Ներարկումը պետք է տևի 60 րոպե և պետք է օգտագործել համապատասխան ներարկման պարագաներ:: Չօգտագործել շիթային ներարկում:
- Ակտեմբան չպետք է օգտագործել նույն Ն/Ե-յին պարագաներով, որոնք նախատեսված են այլ դեղ ստանալու համար: Չկան համատեղելիության կամ բիոքիմիական հետազոտություններ՝ գնահատելու համար ակտեմբային կոմբինացված օգտագոնծումը այլ դեղերի հետ գուրնթաց:

9. Ակտեմրա® (տոցիլիզումաբ) դեղի անվտանգությանը վերաբերվող կարևոր տեղեկատվություն

9.1 Հակացուցումներ

Գերզգայունություն ակտիվ ազդող նյութի կամ ցանկացած այլ հավելումների հանդեպ:
Ակտիվ, ծանր վարակ:

9.2 Օգտագործման հատուկ զգուշացում և նախազգուշացումներ

9.2.1 Վարակներ

Լուրջ և երբեմն մահացու վարակներ են արձանագրվել պացիենտների մոտ, ովքեր ստացել են իմունոսուպրեսիվ ազեոտներ, ներառյալ ակտեմրան: Ակտեմրայի բուժումը չպետք է սկսել այն պացիենտների մոտ, որոնք ունեն ակտիվ վարակ: Ակտեմրայի ներարկումը պետք է ընդհատել, եթե զարգանում է լուրջ վարակ, մինչև որ այն չլինի բուժված: Բժշկական մասնագետները պետք է լինեն զգույշ, երբ նշանակում են ակտեմրայով բուժում այն հիվանդների մոտ, ովքեր ունեն քրոնիկական վարակ կամ ունեն հետևյալ հիվանդության նախանշաններ՝ դիվերտիկուլիտ, շաքարային դիաբետ, թոքերի ինտերստիցիալ հիվանդություն, որը կարող է նախատրամադրել վարակի:

Վաղաժամ լուրջ վարակի հայտնաբերման զգոնությունը խորհուրդ է տրվում պահպանել այն պացիենտների մոտ, ովքեր ստանում են իմունոսուպրեսիվ բուժում՝ օրինակ միջինից ծանր հոդաբորբով պացիենտներ, ովքեր ստանում են ակտեմրա, քանի որ բորբոքման նշանները իրենց մոտ հնարավոր է լինեն շեղված, և բորբոքման սուր փուլի գործոնների արտադրությունը կարող է լինել նվազեցրած: Պետք է հաշվի առնել ակտեմրայի ազդեցությունը C-ռեակտիվ սպիտակուցի (CRP) մակարդակի, նեյտրոֆիլների քանակի և վարակի ախտանիշների վրա ինչպես նաև պացիենտների մոտ զարգացող վարակի վտանգը: Պացիենտներին պետք է խորհուրդ տալ անմիջապես դիմել բժշկական մասնագետներին, երբ իրենց մոտ հայտնաբերվում է վարակի որևէ նախանշան՝ ապահովելու համար համապատասխան վիճակի գնահատումը և բուժումը:

9.1.1.1 Տուբերկուլոզ

Ինչպես այլ կենսաբանական դեղերով բուժման սկսելը, այնպես էլ ակտեմրայով բուժումը սկսելուց առաջ, հոդաբորբով բոլոր պացիենտները պետք է հետազոտվեն Տուբերկուլոզի (ՏԲ) լատենտ շրջանի հայտնաբերման նպատակով: Տուբերկուլոզի լատենտ շրջանում գտնվող պացիենտները պետք է ստանան ստանդարտ հակամիկոբակտերիալ բուժում՝ նախքան ակտեմրայով բուժումն սկսելը: Բժիշկները պետք է հիշեն մաշկային կեղծ բացասական տուբերկուլինի թեստի մասին, ինչպես նաև ՏԲ ինտերֆերոն զամմայի արյան թեստի մասին, մասնավորապես այն պացիենտների մոտ, ովքեր արդեն հիվանդ են կամ գտնվում են իմունոսուպրեսիվ վիճակում:

Հիվանդները կամ հիվանդների խնամողները պետք է տեղեկացնեն իրենց բժշկական մասնագետին, եթե առկա են ՏԲ-ին բնորոշ նախանշաններ (երկարատև հազ, քաշի կորուստ,

ջերմության չնչին բարձրացում) ակտեմրայի բուժման ընթացքում կամ բուժումից հետո՝ ժամանակին հետազոտվելու և բուժվելու նպատակով:

9.1.1.2 Վիրուսի ռեակտիվացիա

Կենսաբանական դեղերով հոդաբորբի բուժման ընթացքում, արձանագրվել է վիրուսի ռեակտիվացիայի (օրինակ վիրուսային հեպատիտ B-ի) դեպքեր: Ակտեմրայի կլինիկական հետազոտություններում չեն ներգրավվել այն պացիենտները, ում մոտ եղել է հեպատիտի թեստի դրական պատասխաններ :

9.1.1.3 Դիվերտիկուլիտի բարդացումներ

Ակտեմրայով բուժման ժամանակ նկատվել են դիվերտիկուլիտի բարդացումներ՝ թափածակումներ (պերֆորացիաներ), որը բնորոշ չէ: Ակտեմրան պետք է նշանակվի զգուշությամբ այն պացիենտներին ովքեր ունեցել են ադիքային խոցային հիվանդություններ, կամ դիվերտիկուլիտներ: Պացիենտները, ովքեր ունեն բարդացած դիվերտիկուլիտի նշաններ, ինչպիսիք են որովայնի ցավը, արյունահոսությունը, և/կամ ոչ բացատրված ադիքային ակտիվության փոփոխությունները՝ զուգակցված ջերմության բարձրացումով, պետք է անցնեն համապատասխան ստուգում դիվերտիկուլիտների վաղ ախտորոշման համար, որը հնարավոր է բարդանա ստամոքսաղիքային թափածակով:

9.1.2 Գերզգայունության ռեակցիաներ

Ակտեմրայի ներարկման ժամանակ արձանագրվել են լուրջ գերզգայունության ռեակցիաներ՝ ներառյալ անաֆիլաքսիան: Այսպիսի ռեակցիաները հնարավոր է լինեն առավել ուժեղ և ունենան կյանքին սպառնացող վտանգ այն պացիենտների մոտ, ովքեր արդեն ունեցել են գերզգայունության ռեակցիայի դեպքեր ակտեմրայի նախորդ ներարկումը ստանալիս, նույնիսկ, եթե իրականացվել է ստերոիդներով կամ հակահիստամինային դեղերով պրեմեդիկացիա: Եթե տեղի ունենա անաֆիլակտիկ կամ այլ գերզգայունության ռեակցիա, ակտեմրայի ներարկումը պետք է դադարեցվի, նշանակվի համապատասխան բուժում և ակտեմրայի ներարկումը պետք է կասեցվի:

9.1.3 Ակտիվ լյարդային հիվանդություններ և լյարդի ֆունկցիայի խանգարում
Ակտեմրայով բուժումը, մասնավորապես եթե այն նշանակվում է մեթոտրեքսատի հետ զուգորդված, կարող է ընթանալ հեպատիկ տրանսամինազների բարձրացումով, դրա համար այն պետք է նշանակվի առավել զգուշությամբ, ակտիվ լյարդային հիվանդություններով և լյարդի ֆունկցիայի խանգարում ունեցող պացիենտների շրջանում:

9.1.3.1 Լյարդային տրանսամինազների բարձրացում

Ակտեմրայով բուժման ընթացքում կլինիկական հետազոտությունների ժամանակ արձանագրվել են տրանսամինազների ցուցանիշների անցումային կամ միջին բարձրացում, առանց լյարդի պրոգրեսիվ ախտահարման: Դրանց բարձրացման հաճախականությունը նկատվել է, երբ պոտենցյալ հեպատոտոքսիկ ազդեցություն ունեցող դեղերը (մեթոտրեքսատ)

կիրառվել են ակտեմրայի հետ: Եթե ակտեմրան կլինիկորեն ցուցված է, ապա պետք է հետևել նաև բիլիռուբինի մակարդակին:

Պետք է լինել զգույշ, եթե ակտեմրան նշանակվում է այն պացիենտներին, ովքեր ունեն ավանին ամինոտրանսֆերանզայի (ALT) կամ ասպարտատ ամինոտրանսֆերանզի (AST) տվյալների բարձրացում նորմայի սահմանից >1.5 անգամ և ավել: Այն պացիենտների մոտ, որոնց ALT or AST նորմայի սահմանից >5 և ավելի անգամ բարձր է, ակտեմրայի բուժումը խորհուրդ չի տրվում:

Առաջին 6 ամսվա ընթացքում ամեն 4-8րդ շաբաթը պետք է հետևել ALT և AST-ի մակարդակին, ապա կրկնել ամեն 12րդ շաբաթում ՌԱ-ով հիավնդների մոտ: Ակտեմրայի նշանակումը պետք է դադարել, եթե ALT-ի և կամ AST-ի բարձրացումը կազմում է 3-ից- 5 անգամ բարձր նորմայի մակարդակի համեմատ:

պՅԻԱյով կամ հՅԻԱյո հիվանդների մոտ ALT և AST պետք է ստուգվի ակտեմրայի երրորդ ներարկումից առաջ և հետո պատշաճ կլինիկական փորձի հիման վրա:

Հավելյալ տեղեկատվության համար տե՛ս Դեղաչափավորումներ և օգտագործման մեթոդներ և Անցանկալի ազդեցություններ բաժինները Դեղի ընդհանուր բնութագրի մեջ:

9.1.4 Արյունաքանակային շեղումներ

Ն/ե ակտեմրայի կամ ենթամաշկային ակտեմրայի MTXի զուգորդված նշանակման ժամանակ նկատվել են նեյտրոֆիլների և տրոմբոցիտների քանակի իջեցում: Այդպիսի շեղումներ նկատվում են նաև TNF անտագոնիստների ընդունման ժամանակ:

Հիվանդներին, որոնք ժամանակին չեն ստացել ակտեմրայով բուժում, խորհուրդ չի տրվում սկսել ակտեմրայով բուժումը, եթե նեյտրոֆիլների ANC մակարդակը ցածր է $2 \times 10^9/L$: Պետք է լինել զգույշ, եթե ակտեմրա դեղի սկսելուն պես, պացիենտն ունի տրոմբոցիտների քանակի ցածր ցուցանիշներ (օրինակ՝ $100 \times 10^3/\mu L$ և ավելի ցածր): Այն պացիենտների մոտ, որոնց $ANC < 0.5 \times 10^9/L$ -է, կամ տրոմբոցիտները կազմում են $< 50 \times 10^3/\mu L$, բուժումը խորհուրդ չի տրվում:

Ծանր նեյտրոպենիան կարող է լինել զուգորդված լուրջ վարակների զարգացման հետ, չնայած նրան, որ ակտեմրայի կլինիկական հետազոտություններում չկա հստակ կապ նեյտրոֆիլների քանակի իջեցման և վարակների զարգացման միջև:

ՌԱ-ով պացիենտների մոտ նեյտրոֆիլները և տրոմբոցիտները պետք է վերահսկել սկսելուց 4 և 8րդ շաբաթվա ընթացքում, իսկ դրանից հետո՝ ստանդարտ կլինիկական ուղեցույցներին համապատասխան:

պՅԻ-ով և հՅԻԱ-ով պացիենտների մոտ նեյտրոֆիլների և տրոմբոցիտների քանակը պետք է վերահսկել ակտեմրայի երկրորդ ներարկումից՝ առաջ և հետո կլինիկական ուղեցույցներին համապատասխան:

9.1.5 Ճարպերի ցուցանիշներ

Ճարպերի ցուցանիշների բարձրացումը՝ ներառյալ ընդհանուր խոլեստերոլը, ցածր խտությամբ լիպոպրոտեինները (LDL), բարձր խտությամբ լիպոպրոտեինները (HDL) և տրիգլիցերիդները, նկատվել են պացիենտների մոտ, ովքեր բուժվել են ակտեմրայով: Պացիենտների մեծամասնության մոտ չի նկատվել աթերոգենիկ ցուցանիշների բարձրացում, և ընդհանուր խոլեստերոլի բարձր թվերը կարգավորվել են համապատասխան բուժման արդյունքում:

Ճարպերի ցուցանիշների գնահատականը պետք է անել ակտեմրայի բուժումը սկսելուց հետո ամեն 4-8րդ շաբաթվա ընթացքում: Պացիենտներին պետք է բուժել տեղային հիպերլիպիդեմիայի կարգավորման ուղեցույցներին համապատասխան:

9.1.6 Նյարդային խանգարումներ

Բժիշկները պետք է լինեն զգոն այն նշանների հանդեպ, որոնք վկայում են նոր առաջացող կենտրոնական դեմիելինիզացիայի ախտանիշի մասին : Կենտրոնական դեմիելինիզացիայի զարգացման և ակտեմրայի ընդունման կապը դեռևս պարզ չէ:

9.1.7 Չարորակ նորագոյացություններ

Չարորակ նորագոյացությունների զարգացման վտանգը բարձր է հոդաբորբով պացիենտների մոտ: Իմունոմոդուլյատոր դեղերը հնարավոր է բարձրացնեն դրանց առաջացման վտանգը:

9.1.8 Պատվաստումներ

Կենդանի ինչպես նաև կենդանի ատենուացված պատվաստումները չպետք է նշանակվեն ակտեմրայի բուժման հետ զուգահեռ, քանի որ դրա անվտանգությունը կլինիկական հետազոտություններում հաստատված չէ: Խորհուրդ է տրվում, որ բոլոր պացիենտները, առավել ևս մեծահասակները, ստանան իրենց պատվաստումները մինչև ակտեմրայով բուժումն սկսելը: Կենդանի պատվաստումների իրականացնելու և ակտեմրայի կիրառումը սկսելու ժամանակահատվածը պետք է լինի տեղական պատվաստումների օրացույցին համաձայն՝ համապատասխանեցված իմունոսուպրեսիվ բուժմանը:

9.1.9 Սիրտանոթային հիվանդության զարգացման վտանգ

Հոդաբորբով պացիենտները ունեն սիրտ անոթային հիվանդությունների զարգացման վտանգ և իրենց մոտ պետք է վերահսկել դրանց զարգացման դրդապատճառները (օրինակ արյան բարձր ճնշումը, հիպերլիպիդեմիան և այլն.), ուղորդվելով տեղական ստանդարտ ուղեցույցներով:

9.1.10 TNF անտագոնիստների հետ զուգորդում

Քանի որ չկան ակտեմրայի և TNF անտագոնիստների կամ հոդաբորբի այլ բիոլոգիական դեղերի հետ համակցված բուժման հետազոտություններ, խորհուրդ չի տրվում ակտեմրան զուգորդել TNF անտագոնիստների կամ հոդաբորբի բուժման այլ բիոլոգիական դեղերի հետ:

9.1.11 Մակրոֆագների ակտիվացման սինդրոմ (MAS)

MASը դա լուրջ կյանքին սպառնացող հիվանդություն է, որը կարող է զարգանալ հ3ԻԱ-ով հիվանդների մոտ: Կլինիկական հետազոտություններում ակտեմրան չի հետազոտվել սուր MAS-ի զարգացման ժամանակ:

9.1.12 Սողայի առկայություն

Ն/Ե ակտեմրան պարունակում է 1.17 mmol (կամ 26.55 մգ) սողա հասնելով առավելագույնը 1200 մգ-ի: Հաշվի առնելով, որ պացիենտները պետք է հետևեն օրական սողայի ընդունման քանակին, ակտեմրայի այն դեղաչափերը, որոնք ցածր են 1025 մգ-ից, պարունակում են ավելի քիչ քան 1 մմոլ սողա (23 մգ), այսինքն կարելի է համարել “սողայից զուրկ”:

9.1.13 Դեղի հետազոտություն

Բիոլոգիական դեղի հետազոտությունը բարելավելու համար, դեղի շուկայական անվանումը, ինչպես նաև բաց թողման համարը պետք է գրանցվի պացիենտի պատմության մեջ:

9.2 Պտղաբերություն, հղիություն, կրծքով կերակրում և լակտացիա

9.2.1 Վերարտադրողական տարիքի կանայք

Վերարտադրողական տարիքի կանայք բուժման ընթացքում և 3 ամիս բուժումից հետո պետք է օգտագործեն վստահելի հակաբեղմնավորիչներ:

9.2.2 Կրծքով կերակրում

Հայտնի չէ, թե արդյոք ակտեմրան արտազատվում է կրծքի կաթով կերակրող կանաց մոտ: Ակտեմրայի արտազատումը կաթի մեջ չի ուսումնասիրվել կենդանիների մոտ ևս: Կրծքով կերակրելը շարունակելու կամ դադարելու որոշումը, ինչպես նաև ակտեմրայի բուժումը շարունակելու կամ դադարելու որոշումը պետք է անել հաշվի առնելով կրծքով կերակրման արդյունավետությունը երեխայի և ակտեմրայով բուժման առավելությունը կնոջ առողջության համար:

9.2.3 Պտղաբերություն

Պտղաբերության վրա ակտեմրայի ազդեցության ոչ կլինիկական տեղեկատվություն հասանելի չէ:

9.3 Անցանկալի երևույթներ (ԱԵ)

9.3.1 Անվտանգության վերաբերյալ ամփոփում

ՌԱ-ով հիվանդների մոտ ամենահաճախ հաղորդված ԱԵ -ից են (մինչև $\geq 5\%$ հիվանդների, որոնք ստացել են ակտեմրան մոնոթերապիայի ժամանակ կամ DMARD-ի հետ զուգընթաց) վերին շնչուղիների վարակներն են, նազոֆարինգիտը, գլխացավը, արյան ճնշման բարձրացումը և ԱԼՏ-ի բարձրացումը:

ՌԱ-ով հիվանդների մոտ առավել լուրջ ԱԵ-ներն են՝ վարակները, դիվերտիկուլիտների բարդացումները և գերզգայունության ռեակցիաները:

Պոլիարտիկուլյար ՅԻԱՅ-ով հիվանդների մոտ ընդհանուր առմամբ ամենա հաճախ ԱԵ-րը եղել են այն դեպքերը, որոնք հանդիպել են ՌԱ-ով հիվանդների մոտ: Ի համեմատ մեծահասակ ՌԱ հիվանդներին, նազոֆարինտիտների, գլխացավերի, սրտխառնոցի, և նեյրոֆիլիների քանակի իջեցման դեպքերը ամենահաճախը գրանցվել են պՅԻԱ-ով հիվանդների մոտ: Խոլեստերոլի բարձրացման դեպքերը եղել են ավելի պակաս պՅԻԱ-ով հիվանդանների մոտ քան մեծահասակ ՌԱ-ով պացիենտների մոտ:

9.3.2 Կասկածելի կողմնակի երևույթների մասին հաղորդելը

Կասկածելի կողմնակի երևույթների մասին հաղորդելը դեղի հետզրանցումային շրջանում կարևոր է: Այն հնարավորություն է տալիս շարունակելու դեղի օգուտ/վտանգ հարաբերակցության վերահսկումը: Կոչ է արվում բժշկական հաստատություններում աշխատողներին հաղորդել բոլոր կասկածելի կողմնակի երևույթների մասին՝ համաձայն ընդունված կարգի:

Հնարավոր ԱԵ մասին ավելի մանրամասն տեղեկություն կարող եք գտնել Ակտեմրայի Դեղի Ընդհանուր Բնութագիր (SmPC) կամ ներդիր թերթիկում, որը կարելի է բեռնել «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ և ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կայքից, հետևյալ հղումով՝ www.pharm.am:

Զանգահարեք ԱԵ-ի մասին տեղեկացնելու համար

Մինչև ակտեմրայի ներարկումը ծանոթացեք դեղի ընդհանուր բնութագրին կամ ներդիր թերթիկին

Ամբողջական ԱԵ-ի մասին տեղեկությունը կարող եք գտնել Ակտեմրայի դեղի ընդհանուր բնութագրի (SmPC) կամ ներդիր թերթիկի մեջ, որը կարելի է բեռնել «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ և ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կայքից, հետևյալ հղումով՝ www.pharm.am:

Բոլոր ԱԵ-ը պետք է զեկուցվեն նաև Ռոշե բժշկական տեղեկատվական մաս ստորև ներկայացրած կոնտակտային տվյալներով՝

Ռոշե Մոսկվայի Դեղերի Անվտանգության բաժին. Է.հասցե. moscow.ds@roche.com, հեռախոս [+7-495-229 2999](tel:+7-495-229-2999), ֆաքս. [+7-495- 229 7999](tel:+7-495-229-7999) կամ www.roche.ru կայք:

Կազմակերպության տեղային կոնտակտային տվյալներով՝

ՀՀ-ում Ռոշե դեղերի տեղային անվտանգության պատասխանատու Գայանե Ղազարյան, հեռ. [+37491796688](tel:+37491796688), է.հասցե. gayaneh.ghazaryan@gmail.com կամ Ռիմա Դավթյան, հեռ. [+374 10734643](tel:+37410734643), է.հասցե. [rima@pharmatech.am](mailto:rима@pharmatech.am).

Այս ուսուցողական նյութերը պարտադիր պայման են ներերակային ակտեմրա դեղի գրանցման հավաստագիր ունեցող երկրների համար՝ նվազեցնելու համար նշված կարևոր վտանգները:

Վահան Արուշանյան,
Գլխավոր տնօրեն, ՖարմաՏեք ՓԲԸ

27.11.18
ամսաթիվ / ստորագրություն

Գայանե Ղազարյան
Հայաստանում Ռոշե դեղերի անվտանգության
Պատասխանատու

28.11.18
ամսաթիվ / ստորագրություն

Հղումներ

1. Sawhney S, et al. Macrophage activation syndrome: a potentially fatal complication of rheumatic disorders. Arch Dis Child 2001; **85**: 421–6.
2. Behrens EM, et al. Occult macrophage activation syndrome in patients with systemic juvenile idiopathic arthritis. J Rheumatol 2007; **34**: 1133–8.
3. Stéphan JL, et al. Reactive haemophagocytic syndrome in children with inflammatory disorders. A retrospective study of 24 patients. Rheumatology (Oxford) 2001; **40**: 1285–92.
4. Ravelli A, et al. Preliminary diagnostic guidelines for macrophage activation syndrome complicating systemic juvenile idiopathic arthritis. J Pediatr 2005; **146**: 598–604.
5. Actemra[®] (tocilizumab) Summary of Product Characteristics. Roche Registration Limited. January 2013.

 **RoACTEMRA**
tocilizumab